ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1951 *Общественные науки*

Հ. Անասյան

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVII ԴԱՐՈՒՄ

Օսմանյան Թուրքերն առաջին անգամ սուլթան Բայազիտ I-ի օրով են երևացել հայկական տերիտորիայի վրա՝ 1392 թվին ներխուժելով Փոքր-Հայքի սահմանները և գրավելով Սեբաստիա, Եվդոկիա ու Կեսարիա քաղաքները, հետո՝ Մալաթիան, Դարանդան, Դիվրիկն ու Բեհեսնին (1395/96 թ. թ.) և վերջապես՝ Կամախի և Երզնկայի գրավումով (1397/98 թ. թ.) հասել են Մեծ-Հայքի սահմաններին, թեև քիչ հետո Լենկթիմուրի արշավանքները նրանց ստիպեցին ետ նահանջել (1402/03 թ. թ.)։ Դրանից ուղղղ յոթանասուն տարի հետո Թուրքերը Մահոմետ II-ի առաջնորդությամբ նորից արշավեցին Մեծ-Հայքի վրա՝ միևնույն սահմաններից։ Նրանք 1473 թ. Երզնկայի և ապա Դերջանի մոտ Ուզուն-Հասանի դեմ տարած հաղթանակներով տիրացան արևմտյան Հայաստանի մի մասին, և այնուհետև հետզհետե իրենց նվաճումներն ընդարձակեցին ի հաշիվ պարսիկների։ Հայաստանը երկար ժամանակ կռվախնձոր դարձավ Թուրքիայի և Պարսկաստանի միջև և, կարելի է ասել, որոշ չափով կայուն սահմանագիծ հազիվ թե հաստատվեց 1639 թվին՝ սուլթան Մուրատ IV-ի և շահ Սեֆի I-ի միջև կնքված դաշնագրով։ Այս դաշնագրով պատմական Հայաստանի արևմտյան նահանգները, որոնք նրա մեծագույն մասն էին կազմում, մնացին Թուրքերի ձեռքում և կոչվեցին արևմտյան կամ թուրքական Հայաստան, իսկ արևելյան նահանգները մնացին պարսիկների ձեռքում, կոչվելով արևելյան կամ պարսկական Հայաստան. սահմանագիծը կազմում էին Վանը, Կարսը և Զըլդիրը, որոնք արևմտյան մասին էին պատկանում։

Իր տնտեսական զարգացման աստիճանով օսմանյան Թուրքիան դեռ շատ հետամնաց էր։ Թուրքական ֆեոդալական հասարակության մեջ արտադրողական ուժերի զարգացումը շատ դանդաղ էր ընթանում և նույն համեմատությամբ էլ երկար էր տևում ֆեոդալիզմի քայքայման պրոցեսը, որը նկատելի երևույթ էր դեռևս XVI—XVII դարերում։ Այդ պատճառով արտադրության կապիտալիստական եղանակի հաղթանակը շատ ավելի ուշ է հասունացել Թուրքիայում, քան, օրինակ, Արևմտյան Եվրոպայի երկրներում։ Դրա պատճառներից մեկը, անտարակույս, օտարերկրյա կապիտալն էր, որը հենվելով պատմական կապիտուլյացիաների[1] վրա, տնտեսական հսկա ուժ էր դարձել Թուրքիայի ներքին կյանքում։ Կապիտուլյացիաների շնորհիվ XVI դարի վերջերին Մերձավոր-Արևելքում արդեն ավարտվել էր եվրոպական առևտրական կապիտալի ներթափանցումը, որը և

[1] *Այսպես էին կոչվում այն պայմանագրերը, որոնցով օսմանյան սուլթաններն «իրենց երկրներում իրավունքներ և արտոնություններ էին «շնորհում» եվրոպական այս կամ այն պետությանը, գլխավորապես առևտրի համար։ Առաջին կապիտուլյացիաները տրվել են Ֆրանսիային սուլթան Սուլեյման I-ի կողմից 1535 թվին։*

կովադաշտ էր դարձրել այդ երկիրը Արևմտյան Եվրոպայի առևտրական պետությունների միջև, հատկապես Ֆրանսիայի, Անգլիայի և Հոլանդիայի։[1] Եվրոպական առևտրական կապիտալն իրեն ենթարկելով տեղական արտադրությունը, արգելակում էր վերջինիս ազատ զարգացումը։

Այդ պրոցեսի գանդաղ լինելու ավելի հիմնական պատճառը պետք է փընտրել, իհարկե, տիրող ռեժիմի մեջ։ Հենց այդ մասին էլ Ֆ. Էնգելսը գրում է.

«Թուրքական, ինչպես և ամեն մի այլ արևելյան տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ. ստացված հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների և փաշաների զիշատիչ ձեռքերից. բացակայում է բուրժուական ձեռներմուն առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և նրա սեփականության ապահովությունը»։[2]

Թուրքական այդ գիշատիչ ռեժիմը երկրի տնտեսական հետամնացության համապատասխանող ռեժիմ էր և իր կարգին արգելակում էր նրա տնտեսության հետագա զարգացումը։ Եվ Թուրքական ֆեոդալիզմի յուրահատուկ բնույթը, խանգարելով տնտեսական հարաբերությունների նորմալ զարգացումը, արգելակում էր Օսմանյան Կայսրության ժողովուրդների ինչպես տնտեսական, այնպես և քաղաքական ու կուլտուրական կյանքի զարգացումը։

Թուրքիայում տիրում էին զինվորա-ֆեոդալական կարգեր։ Այդ կարգերն հաստատվել էին սուլթան Մուրատ I-ի (1360—89 թ. թ.) օրով, երբ զինվորական կազմակերպությունն ամրացնելու նպատակով կայսրության բովանդակ տարածության վրա, այսպես կոչված «պետական հողերում», ստեղծվել էին երկու կարգի՝ մեծ և փոքր՝ ժառանգական ավատներ, որոնք զիամեր և թիմար էին կոչվում, և բաժանվել էին հեծելազորին։ Սուլթան Սուլեյման I-ի (1520—66 թ. թ.) օրով ֆեոդալական օրենսդրությունը լրացվել էր և դեֆթերդար Մուհամմեդ Չելեբիի ձեռքով ամփոփվել հատուկ դրքի մեջ, որը կոչվում էր «Ֆեոդալական օրենսգիրք» (1566 թ.)։ Ավատատեր զինվորականները կոչվում էին սիպահիներ (հեծյալներ)։ Նրանք իրավական իշխանություն ունեին իրենց ավատների բնակչության վրա և տուրքեր էին ստանում նրանից։

Ավատական դորքը օսմանյան պետության գլխավոր ուժն էր։ Պատերազմների ժամանակ զայիմները (զիամեթի տերերը) և թիմարատերերը պարտավոր էին իրենց եկամուտների համեմատությամբ իրենց հպատակներից որոշ թվով ձիավորներ մարտադաշտ հանել՝ անհրաժեշտ ամրողջ սարքով։ Զայիմները, որոնց տարեկան եկամուտը 20,000-ից մինչև 99,999 ստակ (թուրք. ակչե) էր, պարտավոր էին յուրաքանչյուր 5,000 ստակի դեմ մի ձիավոր տալ. իսկ թիմարատերերը, որոնց տարեկան եկամուտը 19,999 ստակից չէր անցնում, պարտավոր էին յուրաքանչյուր 3,000 ստակի դեմ մի ձիավոր տալ։ Նրանք դասավորվում էին գնդերով՝ ալայ-բեգիների (գնդապետների) հրամանատարության տակ։ Բայկոտի հաշվով՝ XVII դարի կեսերին այս զորքի ընդհանուր թիվը մոտավորապես 100,000 էր։[3]

[1] Ֆրանսիայի առևտրական իրավունքները Թուրքիայում հենվում էին 1535 և 1581 թվերի կապիտուլացիաների վրա, Անգլիայի իրավունքները՝ 1593 թվի կապիտուլացիաների վրա, իսկ Հոլանդիայի իրավունքները՝ 1598 և 1612 թվերի կապիտուլացիաների վրա։

[2] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. II, стр. 22.

[3] Ricaut, «Histoire de l'état present de l'Empire Ottoman», trad. de l'anglois par Briot, IIe éd. (Paris, chez Sebastien Mabre, 1670), p. 542—544.

Բացի այս ավատական զինվորականությունից՝ Թուրքերն ունեին նաև ոտքավոր զորքեր։ Նախ՝ հեծելազորը կամ սրփահիները, որոնց չպիտի շփոթել վերոհիշյալ ավատատեր սիփահիների հետ։ Այս զորքը, որ ընդամենը 12,000 էր և մի քանի տեսակներ ուներ, ավելի լավ էր մարզված։ «Պատերազմի ժամանակ,— ասում էր Ռայկոսը,— սիփահիների այս բանակն ուրիշ բան չէ, եթե ոչ անդեկ մարդկանց մի խառնաշփոթ բազմություն. ոչ դասակների են բաժանված, ոչ դնդերի. քայլում են խմբերով ու կովում առանց որևէ կանոնի»։[1] Սիփահիներից հետո Թուրքական բանակի ամենակարևոր ուժը կազմում էր ենիչերիական հետևակազորը։ Ենիչերիները, որոնց ծագումը սուլթան Օրխանի (1326—60 թ. թ.) օրերից էր, սկզբներում բացառապես կազմված էին կայսրության քրիստոնյա հպատակների զավակներից, որոնք մանուկ հասակում խլվելով իրենց ծնողներից և մահմեդական դաստիարակություն ստանալով, մտնում էին զինվորական կարգերի մեջ։ Թուրքերն այս զորքը բանակի լավագույն մասն էին համարում։ Ենիչերիները կովում էին խառնիխուռն և անկարգ կերպով, ինչպես սիփահիները։ Նրանց թիվը 20,000-ից պակաս չէր։ Յուրաքանչյուր նահանգում նրանք ունեին իրենց սերդարները, որոնք տվյալ շրջանում գտնվող ենիչերիների պետերն էին։[2] Կային և ավատատեր ենիչերիներ։ Օնունդով ենիչերիները՝ ենիչերիների զավակները, սերնդական սիփահիների նման, իրավունք ունեին ավատներ ունենալու։[3]

Թուրքական բանակն ուներ մի քանի օժանդակ մասեր ևս։[4]

Օսմանյան կայսրության մաս կազմող երկրները բաժանված էին կուսակալությունների, որոնք կոչվում էին էյալերներ (նահանգներ) կամ փաշայություններ, իսկ կուսակալություններն ստորաբաժանված էին սանջակների կամ գավառների։ Կուսակալության գլխին գտնվում էր փաշան կամ բեգլերբեգին, որպես զինվորական և վարչական պետ ու ղեկավար։ Ամեն մի կուսակալ իր կարգին պարտավոր էր իր եկամտի յուրաքանչյուր 5,000 ստակի դեմ նույնպես մի զինվոր հանել, բայց նրանք սովորաբար շատ ավելի էին դուրս բերում, քան ստիպված էին, թե ցույցի և թե սուլթանին հաճոյանալու համար։[5] Նույնպիսի պարտավորություն ունէին նաև գավառակալները կամ սանջակբեգիները։

Կուսակալներն ու գավառակալները նույնպես բաժիններ ունեին կուսակալությունում գտնվող «պետական հողերից», որոնցից տիրության իրավունքով օգտվում էին այնքան ժամանակ, որքան պաշտոնի վրա էին։ Այսպիսի կալվածները կոչվում էին խասսի-ումերա կամ արփալիք, որը հայկական աղբյուրներում կոչվում է կեր, կերուածք։[6] Սրանք տարեկան 100,000 ստակից ոչ-նվազ եկամուտ ունեցող ավատներն էին։

---

[1] Ricaut, „Histoire de l'état present de l'Empire Ottoman".

[2] Ibidem, p. 590—606.

[3] В. Д. Смирнов. „Кучибей Гёмюрджинский и другие османские писатели XVII века о причинах упадка Турции" (С.— Петербург, 1873), стр. 88—89.

[4] Նրանց մասին տես Ricaut, "Histoire de l'etat present de l'Empire Ottoman", liv. III., chap. X.

[5] Ibidem, p. 179.

[6] Հակոբ Կարնեցի, «Տեղագիր Վերին Հայոց» (Վաղարշապատ, 1903), էջ 24—26։ Հայերեն սույն տերմինի մասին տես՝ Հր. Աճառյան, «Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ», հտ. Բ (Վենետիկ, 1922), էջ 94—96։

Հայկական նախկին նահանգներն, ամբողջությամբ կամ մասամբ մտնելով Օսմանյան կայսրության սահմանների մեջ, երկու մյուս մասերի նման բաժանված էին զանազան կուսակալությունների, որոնք, ըստ Ռայկոտի, ավատների թվի և փաշաների եկամուտների հետ միասին, հետևյալ կազմն էին ներկայացնում XVII դարի կեսերին.[1]

Ա. Վանի կուսակալություն.—Կազմված էր նախկին Վասպուրական, Մոկք, Տուրուբերան և Այրարատ նահանգների մասերից։ Ուներ 13 սանջակներ.

1. Վան Van. 2. Ադիլջևազ Adilcevaz (Արծկե). 3. Էրջիշ Erciş (Արճեշ). 4. Մուշ Muş. 5. Բարգիրի, Bargiri (Բերկրի). 6. Գյարգյար Gârgar (Կարկառ). 7. Քիսան Kısan (Կեցան). 8. Իսփայիրդ Ispayird (Սպարկերտ). 9. Աղաքիս Ağakis. 10. Կոթուր Kotur (Կոտոր). 11. Բայազիդ. Bayazid. 12. Բերդա Berda. 13. Օվաջըկ Ovacık.

Ուներ 185 զիամեթ և 826 թիմար, որոնք նվազագույն հաշվով 2392 կովող էին տալիս։ Փաշայի տարեկան եկամուտը 1,132,209 ստակ էր։[2]

Բ. Էրզրումի կուսակալություն.—Կազմված էր պատմական Հայաստանի Բարձր-Հայք, Տուրուբերան, Այրարատ ու Տայք նահանգների և Փոքր-Հայքի մասերից։ Ուներ 12 սանջակներ և 13 բերդեր.

1. Էրզրում Erzırum (Կարին). 2. Կարահիսարի-Շարքի Karahisari-Şarkı կամ Շարին-Կարահիսար Karahisari-Şabin. 3. Քըղը Kığı (Կեղի). 4. Փասին Pasin (Վերին Բասեն, Հասան-Կալե). 5. Իսփիր Ispir (Սպեր). 6. Խրնուս Xınus. (Խնուս). 7. Թեքման Tekman. 8. Թորթում Tortum. 9. Մեջենգերդ Mecengerd (Մժնկերտ, Ստորին Բասեն). 10. Մամրևան Memrevan (Նարիման). 11. Կրզուչան Kızuçan (Ղըզըլչան). 12. Մելազգերդ Melazgerd (Մանազկերտ)։

Կուսակալությունում գտնվում էին 123 զիամեթ և 5.548 թիմար, որոնք նվազագույն հաշվով տալիս էին 11,584 կովող։ Փաշայի տարեկան եկամուտը 1,200,660 ստակ էր։

Գ. Կարսի կուսակալություն.—Կազմված էր նախկին Այրարատ և Գուգարք նահանգների մասերից։ Ուներ 7 սանջակներ.

1. Կարս Kars. 2. Էրդեհանի-Քյուչուք Erdehani-Kuçük (Արդահան Փոքր). 3. Խոջևան Xocevan. 4. Զարուշատ Zaruşat (Զարիշատ). 5. Քեչևան Keçevan. 6. Կաղըզման Kağızman (Կաղզվան). 7. Փասին Pasin (Անփայտ Բասեն կամ Փոքր Վանանդ)։

Այս կուսակալության զինվորական ավատների թիվը չի նշված։ Փաշայի տարեկան եկամուտը 820,650 ստակ էր։

Դ. Դիարբեքիրի կուսակալություն.— Այս կուսակալությունը կազմված էր կես առ կես հին Հայաստանի և Հայկական Միջագետքի գավառ-

[1] Տալիս ենք ըստ Ricaut-ի, „Histoire de l'etat present de l'Empire Ottoman". liv. I, chap. XII et liv. III, chap. III. Ռայկոտի մոտ անունները չափազանց աղավաղված են. իսկ մենք այստեղ ներկայացնում ենք ուրիշ աղբյուրների օգնությամբ մեր կատարած ստուգումների արդյունքը և հշտումները միայն։

[2] Այս շրջանում 80 ստակը կամ ակչեն արժեր մի սպիտակ ոսկի։ Ակչե կոչվում էին արծաթե թուրքական մանր դրամները։ Ակչե akçe բառը նշանակում է «սպիտակ» և գոյականաբար թարգմանությունն է նոր հունարեն ασπρο «սպիտակ» ածականի, որից և նմանապես հայերեն ստակ (գոյ.) <սպիտակ (ած.)։

ներից։ Հին Հայաստանից նրա մեջ ընդգրկված էին Հորրորդ-Հայքի նահանգը գրեթե ամբողջությամբ և մի շարք գավառներ Աղձնյաց նահանգից։ Ուներ 20 սանջակներ, որոնցից մի մասը կայսերական էին, իսկ մնացածը՝ ժառանգական։

Կայսերական էին հետևյալ սանջակները.

1. Դիարբեքիր Diarbekir (Ամիդ Amid). 2. Խարփութ Xarput (Խարբերդ). 3. Արդնի Arğni, Arğana 4. Սիվերեք Siverek (Սևավերակ). 5. Նիսիբին Nisibin (Մծբին). 6. Հիսնի-Քեյֆ Hisni- Keyf. 7. Չիմիշգեզեք Çimişgezek (Զմշկածագ). 8. Սիիրտ Siirt (Սղերտ). 9. Մեֆարեկին Mefarekın (Նփրկերտ). 10. Ակչե-Կալե Akçe Kale. 11. Խաբուր Xabur. 12. Սինջար Sincar

Հետևյալները քրդական ժառանգական սանջակներ ocaklık էին.

13. Սագման Sagman. 14. Կուլբ Kulb (Խուլբ). 15. Միհրանի Mihrani. 16. Թերջիլ Tercil. 17. Աթակ Atak. 18. Փերթեք Pertek (Բերդիկ). 19. Չապակչուր Çapakçur (Զապաղջուր). 20. Չերմիք Çermik (Չերմիկ)։

Կուսակալությունում գտնվում էին 106 դիամեթ և 540 թիմար, որոնք նվազագույն հաշվով 1,504 կռվող էին տալիս։ Քրդական սանջակներից միայն Կուլբում կային ավատներ։

Բացի վերոհիշյալ 20 սանջակներից՝ կային նաև 5 հուքյումեթներ hükûmet, այսինքն հայրենական իրավունքով քուրդ բեգերի պատկանող ժառանգական իշխանություններ, որոնք զորք էին տալիս պետության ծախսով։ Նրանք հետևյալներն էին.

1. Էգիլ Egil (Ակլ). 2. Փալու Palu (Բալու). 3. Ջեզիրե Cezire (Գզիրա). 4. Խզոու Xızu (Խզու). 5. Դենջ Genc.

Փաշայի տարեկան եկամուտը 1,200,660 ստակ էր։

Ե. **Չըլգըրի կուսակալություն.** — Այս կուսակալությունը կազմված էր նախկին Տայոց և Դուզարաց նահանգների մասերից։ Ուներ 10 սանջակներ.[1]

1. Չըլդըր Çıldır. 2. Օլթի Olti, Oltu (Ուխտիք). 3. Խարթուս կամ Խըրթզ Xartus, Xırtız (Խերթվիս). 4. Էրդենուջ Erdenuc (Արտանուշ). 5. Էրդեհանի-Բույուք Erdehani-Büyük (Արդահան Մեծ). 6. Խաջրեք Xacrek. 7. Փոսխու Posxu (Փոցխով). 8. Մախջիլ Maxcil (Մաջխել). 9. Իջարեյի-Փենբեք Icareyi-Penbek (Փամբակ, Բամբակ). 10. Փերթեքբեք Pertekrek (Բերդագրակ)։

Ուներ 106 դիամեթ և 659 թիմար, որոնք նվազագույն հաշվով 1,742 կռվող էին տալիս։ Փաշայի եկամուտը 925,000 ստակ էր։

Զ. **Փոքր-Հայքի գավառներ։** — Վերոհիշյալներից բացի՝ մի քանի ուրիշ սահմանակից կուսակալությունների մեջ բաժանված էր նաև Փոքր-Հայքը։ Սեբաստիայի Sıvas, Դիվրիկի Divrik և Արաբկիրի Arabkir գավառները (Երկրորդ—Հայքից) մտնում էին Սրվազի կամ Սեբաստիայի կուսակալության մեջ. Մարաշի Maraş, Մալաթիայի Malatya և Սամսատի Samsad գավառները (Երրորդ—Հայքից)՝ Մարաշի կուսակալության մեջ.

---

[1] Այս սանջակներից մի մասը հայկական են, իսկ մի մասը վրացական։ Մենք Չըլդրրի կուսակալության ամբողջական պատկերը պահելու համար տալիս ենք բոլորը միասին։

իսկ Կեսարիայի Kayseri գավառը (Առաջին—Հայքից)՝ Կարամանիայի կուսակալության մեջ։

Փոքր-Հայքի այս գավառներում ևս կային մոտավորապես 81 գիամեթ և 1,929 թիմար, որոնք նմանապես նվազագույն հաշվով տալիս էին 4,182 կովոդ։ Այս գավառների փաշայական տարեկան եկամուտը միջին հաշվով 857,079 ստակ էր։[1]

Այս էր արևմտյան Հայաստանի վարչական պատկերը։

Արևմտյան Հայաստանի ազգարնակությունը բաժանում էր այն զառն ճակատագիրը, որը վիճակված էր Օսմանյան Կայսրության ընդհանրապես բոլոր ժողովուրդներին։

Թուրքիայում իշխում էր զուրանական սկզբունքներով ամրապնդված ասիական բիրտ բռնակալությունը. բայց XVI դարի վերջերից սկսած կենտրոնական իշխանության թուլացումն ավելի էր վատթարացրել դրությունը զինվորա-ֆեոդալական այդ երկրում, տեղի տալով բարքերի ընդհանուր անկման և ներքին անկարգությունների, որոնց թվում առաջին հերթին մի շարք զինվորական ապստամբություններ։

Սուլթան Մուրադ III-ի (1546—96 թ. թ.) օրով զինվորական կարգերի և իրավունքների մեջ մուծված զեղծումների հետևանքով դարի վերջին տասնամյակում զինվորական անդադրում ապստամբություններ ծագեցին երկրի բոլոր կողմերում, մայրաքաղաքից մինչև Սիրիա և Եգիպտոս, Բուդայից մինչև Թավրիզ։

Բայց ապստամբությունների գլուխ գործողն եղավ այսպես կոչված ջալալիների շարժումը, որն այս նույն ժամանակամիջոցում սկսվելով, XVII դարի սկզբներին տարածվեց կայսրության ասիական նահանգներում, մայրաքաղաքից մինչև պարսկական սահմանները։ Այդ ապստամբներից առաջինն եղավ սեղրանների գնդապետ Արդուլհալիմը, որ կոչվում էր Կարա-Յազիջի։ Սա հունգարական ճակատից խույս տվող փախստականների գլուխն անցած նախ ամրացավ Ուրֆայում (Եդեսիայում), որտեղից հետզհետե ստվարացած շարքերով առաջացավ դեպի Սեբաստիա, Կեսարիա և այլ շրջաններ։ Նրա օրինակին հետևեցին ուրիշներ, նրու եղբայր Դելի-Հասանը՝ Կարամանիայում, Քյոսե-Նեֆեր փաշան՝ Լեվենդում, Ահմեդ փաշան՝ Սեբաստիայում, Կարա-Սայիդը և Ուզուն-Հասանը՝ Մարզվանում ու Կաստեմունիում։ Էրզրումի կուսակալությունը սեղրանների ձեռքումն էր։ Դրանց հետո հանդես եկան Կալենդեր-Օղլի Մեհմեդ փաշան, Սաչլուն ու Ուզուն-Խալիլը. նաև Մուսելլի-Զաուշը, Ջեմշիդը, քուրդ Ջամբուլադը, Դրուզի Ֆախրեդդինը և բազմաթիվ ուրիշներ։ Նրանց դեմ կատարված բազմաթիվ արշավանքները միշտ պարտություն կրեցին. միայն մեծ վե-

[1] Այս հաշիվը մոտավորապես ճիշտ է։ Արել ենք հետևյալ կերպ։ Սեբաստիայի փաշայի տարեկան ընդհանուր եկամուտը՝ կուսակալության 7 գավառներից՝ 900,000 ստակ է. ուրեմն՝ յուրաքանչյուր գավառից միջին հաշվով 128,571 ստակ, որով հայկական 3 գավառներից՝ 385,713 ստակ։ Մարաշի փաշայի տարեկան ընդհանուր եկամուտը՝ կուսակալության 5 գավառներից՝ 628,450 ստակ է. այսինքն՝ յուրաքանչյուր գավառից միջին հաշվով 125,690 ստակ, ուստի՝ հայկական 3 գավառներից՝ 377,070 ստակ։ Կարամանիայի փաշայի տարեկան ընդհանուր եկամուտը՝ կուսակալության 7 գավառներից՝ 660,074 ստակ է. որով՝ մի գավառից միջին հաշվով 94,296 ստակ։ Այսպիսով՝ երեք կուսակալություններ մեջ Փոքր—Հայքի 7 գավառների փաշայական եկամուտների ընդհանուր գումարն անում է մոտավորապես 857,079 ստակ։

վիր Մուրազ փաշան էր, որ 1607/08 թվերին կարողացավ որոշ չափով խորտակել նրանց ուժը.[1]

Ջալալիների շարժումը Թուրքիայում ստեղծեց լարված դրություն. Ներքին խռովությունները հայերի առանց այն էլ ծանր վիճակը դարձրին ճգնաժամային. Շարժմանը միացած ավազակային սարբերը առանձին դաժանությամբ էին կողոպտում և սպանում հայ բնակչությանը.

Առաքել Դավրիժեցին նրանց մասին խոսելով ասում է.

«Սոքա ամենեքեան Ջալալիք էին որք ոչ հնազանդէին թագաւորին, և ոչ ի տեղի ուրեք զկայ առնալ բնակէին, այլ աշխարհաւերք և աշխարհակործանք և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշինուածսն հրդեհեալ այրէին. Ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև ցԵրևան քաղաք, ի Բաղդատայ մինչև ցՐամուրզափուն, զՍպիտակ ծովու մէջն և զՍեաւ ծովու մէջն, այս եղերքս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին».[2]

Առաքել Դավրիժեցու խոսքը վերաբերում է, ուրեմն, նաև հայկական նահանգներին. Իրոք, աննկարագրելի էին, օրինակ, Սեբաստիայի հայության վիճակը տառապանքները. Մելքիսեթ Սեբասացին Կարա-Յազիջիի արշավանքի առթիվ պատմում է, թե «մատնեցաւ քաղաքն և երկիրն մարդով և անասնով, ընչքն և ապրանաւքն ի ձեռն արեանարբու գազանին, որ անխնայ կոտորեաց բազում քրիստոնեայս... և բազում աւուրս նստեալ յեղը քաղաքին այրեաց և աւերեաց զգեղեցկաշէն քաղաքն և զաւանքն, մինչ զի ամայի մնաց Սեբաստիայ թեմոքն և վիճակքն բազում ժամանակս».[3] Նմանօրինակ պատկեր ունեցավ և Թոխաթը՝ նախկին Եվդոկիան, Դելի-Հասանի արշավանքի ժամանակ, ինչպես այդ առթիվ իրենց գրած «Ողբ»-երում երկարորեն պատմում են Ստեփանոս Թոխաթեցին[4] և Հակոբ Բաթուկենցը.[5] Այսպես եղավ և Մեծ-Հայքի գավառներում, ինչպես Աղարիա Սասնեցին մի առ մի պատմում է. Քեփենեք-օղլին տվերեց Կեղիի շրջանը.

---

[1] J. de Hammer, „Histoire de l' Empire Ottoman", trad. de l' allemand par Dochez, t. II (Paris, 1844), livres XLI—XLIII.

Հայկական ժամանակակից աղբյուրներ շատ կան Ջալալիների ավերածությունների մասին. Պատմական ճոխ նյութ է պարունակում, օրինակ, Աղարիա Սասնեցու քերթվածը. «Ողբ ի վերայ հարուածոց արեելեան գաւառացն և աշխարհին Հայոց ի ձեռաց Ճելալեանց», Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 325—336. Ընդարձակ տեղեկություններ կան նաև Գրիգոր Կամախեցու և Առաքել Դավրիժեցու մոտ. Մեզ ծանոթ են ուրիշ անտիպ աղբյուրներ ևս. Տեսնել նաև Հ. Մ. Ջամչյանի «Պատմութիւն Հայոց», հտ. Դ (Վենետիկ, 1786), էջ 556—561. Թուրքական աղբյուրների օգտագործմամբ կարևոր, բայց մասնակի աշխատություն է՝ А. С. Тверитинова, „Восстание Кара Языджи—Дели Хасана в Турции" (Москва—Ленинград, Изд. Академии наук СССР, 1946), որը միայն Կարա-Յազիջիի և Դելի-Հասանի շարժումներն է ընդգրկում, 1596—1604 թ. թ.

[2] «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ» (Վաղարշապատ, 1896), էջ 87.

[3] Երևանի Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1875, էջ 229բ.

[4] Ստեփանոս Թոխաթեցի, «Ողբ և ոտանաւոր տաղ ի վերայ Եւդոկիա մեծի քաղաքին, որ այժմ Թոխաթ ասի, զոր անօրէն և անհաւատ Տէլու Հասան Ղարայ Եազըճին զալի և ճէլալի յայտնեցաւ» և այլն, տեսնել Հ. Ղ. Ալիշանի «Հայապատում», մասն Բ (Վենետիկ, 1901), էջ 605—608.

[5] Հակոբ Բաթուկենց, «Ողբ ի վերայ Եւդոկիա քաղաքին՝ որ այժմ ասի Թոխաթ, զոր ոմն անօրէն Տէլու Հասան ասեն որ էկաւ այրեաց և աւերեաց զաշխարհն», տեսնել անդ, էջ 608—610.

Արուսեֆը քանդեց Խնուսը և «այնքան սա խեղճ բաներ արաւ, մինչ դի ճակատն եղջիւր բուսաւ». Բրբահիմ բեկը երեք հազար մարդով ամբողջ վեց տարի ավերեց Մուշի գավառը և շրջակա երկրները, «ազգի ազգի չարիս ածեալ, զինչրս նոցա յափշտակեալ, զբնակիչսըն փախուցեալ, զապրանք վանացն առ ինքն առեալ», և ապա մինչև Երևան սփռեց իր ավերածությունները։ Միր Մահմեդը քարուքանդ արեց Մերդինը և Մծբինը մինչև Ամիդ. Քյոսե-Սնֆերը քսան հազար մարդով յսիր տարի շարունակ «ի յԱնթափու մինչ Արզրրում, անթիւ բազում արար զուլում». Միր Էզդինը ավերեց Դիարբեքիրի գավառները, Հիսնի-Քեյֆից և Ամիդից մինչև Մծբին, և Ջեզիրեից մինչև Սղերտ, և այլն[1]։ Իսկ Հայաստանի արևելյան գավառներում, Կարբի, Ապարան, Ղըրխ-Իուլախ, Ծաղկաձոր, Գառնի, Երևան, Գեղարքունիք, որոնք այդ շրջանում թուրքերի ձեռքումն էին,— ջալալիների գործած նմանօրինակ արարքների մասին երկարորեն գրել է Առաքել Դավրիժեցին.[2]

Այսպիսով, Հայաստանի գրեթե բոլոր շրջաններն էլ հավասարապես տուժել էին այդ ապստամբություններից։ Ավելի ընդհանուր պատկերն այսպես է ամփոփել Ազարիա Սասնեցին իր «Ողբ»-ում.

«Այս ամենայն չարս որ գրրեալ,
Ի մեր մեղացըն գործեցեալ.
Հայաստանու հիմրն քակեալ,
Մինչև ի սպառ զնա կործանեալ.
Հազար քառասուն թուին ըսկըսեալ (1591 թ.)
Մինչ ի վախսունրն ժամանեալ (1611 թ.).
Եւս առաւել չարիք ցուցեալ,
Զաշխարհս Հայոց ըրնաւ ջընջեալ»։[3]

Ուրեմն ամբողջ քսան տարի է տևել ջալալիների այս ապստամբությունը։[4]

Սակայն այս ապստամբությունն ունեցավ նաև այլ հետևանքներ, որոնցից առաջինը սովն էր։

«Եւ յայսմ պատճառէ,— ասում է Առ. Դավրիժեցին,— հողագործք և երկրագործք՝ որք յուրաքանչիւր տեղիս գոյին, յերկիւղէ և յտհէ սոցա փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լերանց ամրանային, և ոչ կարէին առնել երկրագործութիւն. վասն որոյ սերմանել և հնձել և կալ ու կուտ բարձաւ ամենեին և սկսաւ լինել սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ոչ գտանիւր. և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր, և այն ևս ծանր գնոյր»։[5]

Սովն ամենակուլ գազանի նման տարածվեց երկրի մինչև հեռավոր անկյունները։ Մարդիկ կերան ձի, ջորի, էշ, շուն, կատու, «և այլ ինչ որ ի ձեռս անկաներ վասն կարեաց կերակրոյնց», շարունակում է Դավրիժեցին և գրում. «Մրբև այլ առաւել սաստկացաւ սովն, սկսան ուտել զմե-

[1] Ազարիա Սասնեցի, «Ողբ», Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 331—333։

[2] Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 79—85։

[3] Ազարիա Սասնեցի, «Ողբ», Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 334—335։

[4] Ջալալիների շարժման սոցիալական բնույթի մասին մենք հետագայում հանգամանորեն կարտահայտվենք առանձին հոդվածով։

[5] Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 87։

ոնալս՝ և ոչ թագէին՝ այլ ուտէին. քանզի զօրացեալ էր ի վերայ աշխարհի սոցա։ Եւ բազումք ի բազում տեղիս զկենդանի մարդս ըմբոնէին և ուտէին», «և ոչ միայն զայլ օտար մարդ ուտէին՝ այլ և արք և կանայք զզաւակս իւրեանց կերեալ են»։ Եվ նույն մատենագիրը մեր աչքերի առաջ դնում է բազմաթիվ տեսարաններ այդ ողբալի կյանքից. մեզ դրվագներ է պատմում Հայաստանի զանազան կողմերից, Սեբաստիայից մինչև Կարին և մինչև Այրարատյան աշխարհ։[1]

Ջալալիների ապստամբության հետևանքներից մեկը եղավ Շահ-Աբբաս I-ի արշավանքը և արևմտահայ նահանգների մի մասի բռնի ամայացումը ժողովրդական մասսաներից, այն իմաստով, որ օգտվելով Օսմանյան Կայսրության այս ներքին շփոթություններից, պարսիկները նախ գրավեցին Թուրքական Հայաստանի մի շարք գավառները, և ապա, երբ ստիպված եղան նահանջել օսմանյան բանակների առաջ, այդ գավառների ամբողջ ազգաբնակությունը վարեցին ու քշեցին դեպի պարսկական Հայաստան և այնտեղից էլ, տեղական հայերի հետ միասին, դեպի Պարսկաստանի խորքերը (1605 թ.)։ Այսպես՝ նրանք օսմանյան Հայաստանից գերեցին ու տարան Շարապխանայի (կամ Զարափխանայի), Շիրակվանի, Զարիշատի, Կարսի գյուղերի մի մասի և Կաղզվանի ձորի ու Ալաշկերտի շրջանի ամբողջ բնակչությունը. նաև Կարինի, Բասենի, Խնուսի, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի, Բերկրիի և Վանի ամբողջ գավառների բնակիչներին։[2] Առաքել Դավրիժեցին, որ մեզ տալիս է այս տեղեկությունը, պատմում է նաև, թե ինչպիսի աննկարագրելի թշվառության պայմաններում է տեղի ունեցել այդ բռնագաղթը և թե ինչպես տասանորդվեց ժողովուրդը մինչև Պարսկաստան հասնելը։[3] Իսկ օսմանյան Հայաստանի այս ամայացման ծավալը պատկերացնելու համար բավական է ասել, որ միայն Արծկեից գերված հայերի թիվը 23,000 էր, չհաշված սպանվածները։[4]

Ջալալիների ապստամբության անմիջական հետևանքներից մեկն էլ եղավ հայ ժողովրդի արտագաղթը իր հայրենի երկրից, արտագաղթի այն մեծ հոսանքը, որն ամբողջովին ամայացրեց հայկական նահանգները։ Հայրենի երկրից փախչող ժողովրդական մասսաները հարյուր հազարներով դեպի պանդխտություն դիմեցին, նույնպիսի աննկարագրելի պայմաններում։ Գրիգոր Կամախեցին, իբրև ականատես, այսպես է նկարագրում Կ. Պոլիս հասնող գաղթի կարավաններից մեկը.

«Տեսաք որ Հարդուլումէն ի վայր ամենայն աշխարհի մարդիկ երկրակոչ էին արարել ի յահէ սպանողացն և չարաչար տանջողացն, ի փախուստ տեղացն մաղապուրծ լինելով, թափուր և ունայն յամենայնէ, մերկ և բոկ մուրանալով եկին յԿ.ստամբոլ...»։[5]

Այս արտագաղթը և Շահ-Աբբասի բռնագաղթը բացասաբար ազդեցին Թուրքական Հայաստանի ազգային կազմի ապագա բախտի վրա, որովհետև հետագայում շատ սակավ մարդիկ միայն կարողացան վերադառնալ երկիր։ Արտագաղթը երկու գլխավոր ուղղություն էր ունեցել։ Բնակչության

[1] Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 88—90։
[2] Անդ, էջ 53. ավելի ընդարձակորեն՝ էջ 30—36։
[3] Անդ, էջ 38—46։
[4] Անդ, էջ 33։
[5] Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 68—69։

մի մասն ուղղվել էր դեպի արևելք՝ ապահովություն փնտրելով Երևանի Գանձակի, Թավրիզի և Արտավիլի շրջաններում ու շրջակա գավառներում, իսկ այդ տեղերից Շահ-Աբբասը՝ իր վերոհիշյալ գերեվարության ժամանակ նրանց բոլորին քշեց դեպի Պարսկաստան։ Երկրորդ ուղղությունը եղել էր դեպի արևմուտք՝ Կ. Պոլիս ու շրջակայքը (ամբողջ Ռումելիա), մինչև Մոլդավիա և Լեհաստան, Կիպրոս ու Հռոդոս, Կաֆա (Ղրիմում) և Գոզլով, և ավելի հեռավոր վայրեր։[1] Ըստ Սիմեոն Լեհացու՝ Կ. Պոլսում 1608 թվին 80 տուն տեղացի հայերի դեմ 40,000 տուն գաղթականներ կային. և «թէ հաշուես ի Պուղտանայ մինչև Ստամպօլ, պուխուն Ուռումելին մինչև մեծն Վանատիկ, նա չկա քաղաք, գեղ կամ չիֆլիկ, որ հայ չկենայ. որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս զփոշի»։[2]

Այսպիսի չարաբաստիկ տեսարանով էր բացվում արևմտահայ ժողովրդի պատմության վարագույրը XVII դարի սկզբներին։

Սակայն, ինչպես ասացինք, առանց այն էլ Թուրքիայում տիրում էր ասիական բիրտ բռնակալությունը, որի տակ տառապում էին կայսրության բոլոր ժողովուրդները,— այդ թվում և թուրք աշխատավորությունը,— թեև ոչ-հավասարապես. իսկ հատկապես հայ ժողովրդի դրության մասին խոսելիս պիտի ընդգծել, որ Թուրքիայում տիրում էր մի այնպիսի իրավակարգ, որի տակ շնչելն անհնարին էր կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների համար։

Օսմանյան Թուրքիան թեոկրատական կարգերի դասական տիպարն էր։ Այնտեղ զուրանի և շերիաթի սկզբունքների վրա կառուցված հասարակության ու պետության գլխին կանգնած էր սուլթանը, որ համարվում էր Ալլահի ստվերը երկրի վրա և Մուհամմեդի օրինական հաջորդը։ Նա բացարձակ իշխանությամբ «հավատացեալ» և «անհավատ» միլիոնավոր հպատակների ճակատագիրն էր վարում։

Մահմեդական երկրներում թեև օրինականորեն ընդունված էր իրավահավասարության սկզբունքը,— գոնե տեսական հողի վրա,— բայց դա միայն Մուհամմեդի հետևորդներին էր վերաբերում. ոչ-մահմեդական ժողովուրդները բառի բովանդակ առումով իրավազուրկ էին։ Տիրող օրենսդրությունն ու ավանդությունները խիստ կերպով որոշել ու սահմանել էին «անհավատների» դիրքը «հավատացեալների» հասարակության մեջ։ Մահմեդական աշխարհում ընդունված վաղեմի սովորությամբ խարաջը ոչ-մահմեդականներին իրավապես տարորոշող նշանն էր հանդիսանում։

Այսպես էր և Թուրքիայում։ Այնտեղ ոչ-մահմեդական ժողովուրդները,—հայերը, հույները, բուլգարները, սերբերը, ալբանացիները, ասորիները, հրեաները և այլն,— խարաջ էին վճարում և ապրում կատարեալ ստրկության մեջ։ Ռայան (ոչ-մահմեդական հարկատու հպատակ) կամ գյավուրը (անհավատ), ինչպես անվանում էին ոչ-մահմեդականներին, արհամարհված տարը էր։ Մահմեդականը արտոնյալ դիրք ուներ նրա հանդեպ, իսկ դրանից բխող կրոնական մոլեռանդությունն ու անհանդուրժողությունը դուռ էին բաց անում բազմապիսի զեղծումների։

Խարաջը, որ իբր թե ոչ-մահմեդականին իր կրոնն ազատորեն դավա-

[1] Առաքել Դավրիժեցի, «Պատմութիւն», էջ 68 և 147—148։ Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 51 և 322—323։

[2] «Սիմէոն գրի Լեհացւոյ ուղեգրութիւն», Հանդէս Ամսօրեայ, 1932, էջ 469։

նելու իրավունք էր տալիս[1], ոչ մի ապահովություն չէր տալիս կրոնական բռնությունների դեմ։ 1661 թվին Կ. Պոլսում որպես արքունի սեփականություն աճուրդի հանվեցին հունական, հայկական և հրեական աղդային սեփականությունները, այն պատճառով, որ այդ համայնքները Զուլումիյեի մզկիթի շինության համար պայմանավորված դումարները չէին վճարել։ Ավազակային որոշման զոհ գնացին նախ հրեաները. «և ծախեցին զամենայն տեղիս և զբնակութիւնս և զթաղս և զաղօթանոցս վասն ճամոյն շինութեան... և առին մեծամեծք Տաճկաց՝ մզկիթս և օտալարս, տունս և դարպասս առնելով տաճկաստանեաց». իսկ հույներն ու հայերը, շտապելով վճարել պահանջված գումարները, կարողացան բարեփոխել հրամանը, այն տարբերությամբ, որ իրենց կալվածները միայն քրիստոնյաների ծախվեն, բայց այն պայմանով, որ վերանորոգում չկատարվի, այլ միայն բնակարաններ կառուցվեն. այլ խոսքով՝ նրանք թե պահանջված գումարները վճարեցին և թե իրենց սեփականություններն աճուրդով կրկին գնեցին։[2] 1662 թվին նույնքան և ավելի ողբալի տեսարաններ պարզվեցին մայրաքաղաքում ու գավառներում։ Արքունիքի քարոզիչ շեյխ Վանիի դրդումով հրաման եղավ Կ. Պոլսում քանդել այն բոլոր եկեղեցիները, որոնք սկսել էին վերանորոգվել 1660 թվի մեծ հրդեհից հետո։ Ողբերգությունն սկսվեց սոսկալի հալածանքով, բանտարկություններով ու տուգանքներով, և վերջացավ բազմաթիվ հունական ու հայկական եկեղեցիների կողոպուտով ու քանդումով։[3] Նույն հրամանն ուղարկվեց նաև գավառները. եկեղեցիներ քանդվեցին Կարսում, Ակնում և Շարին-Կարահիսարում. Կարինում հայոց ս. Ստեփանոս եկեղեցին մզկիթի վերածվեց. միայն Վանումն է, որ տեղական պաշտոնեությունն անտեսեց այդ հրամանը, իհարկե կաշառի ուժով։[4]

Թուրքերի համար միաժամանակ մարտական խնդիր էր ճնշված ժողովուրդների մահմեդականացումը։

«Տաճիկք մեծ վարձք համարելով զքրիստոնէից ուրանալ զՔրիստոս և ի Մահմէտի օրէնս և ի կրօնս դառնալ,—ասում է Գրիգոր Կամախեցին,—զիաչ և զեկեղեցի բեկանել և խորտակել, և հաւատացեալք որ ոչ հաւանին Մահմետի և չար կրօնից նորին, ազգի ազգի տանջանօք չարչարեն և հրով այրեն և համարին պաշտօն Աստուծոյ մատուցանելոյ։»[5]

Այս երևույթի մասին խոսում է և Ռայկոտը, ասելով թե նրանք բազմատեսակ բռնություններ և «անթիվ անհամար մեքենայություններ» են ի գործ դնում այլակրոնների մահմեդականացնելու համար։[6]

Նահատակության բազմաթիվ փաստեր հաստատում են Կամախեցու և Ռայկոտի վկայությունները։ Մի կողմ թողնելով նախորդ և հաջորդ դա-

---

[1] Michel Febvre, „L'Etat present de la Turquie„ (Paris, 1675). p. 154.

[2] «Օրագրութիւն Երեմիա Չելէպի Քէօմուրճեանի» (Երուսաղեմ. 1939), էջ 373։ Նաև նույն հեղինակի «Պատմութիւն համառօտ Դ. տարւոյ Օսմանցոց թագաւորացն», Սրբանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 1675, էջ 159ա։

[3] Նույն, «Օրագրութիւն», էջ 384—392։ Տեսնել նաև Հակոբ Կարնեցի. «Տեղագիր Վերին Հայոց», էջ 35։ J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman„, t. III. p. 78.

[4] Երեմիա Չելեբի, «Օրագրութիւն», էջ 400։ Նաև նույն հեղինակի «Պատմութիւն համառօտ Դ. տարւոյ Օսմանցոց թագաւորացն», էջ 160ա։ Հակոբ Կարնեցի. «Տեղագիր Վերին Հայոց», էջ 35։

[5] Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 467—468։

[6] Ricaut, „Histoire de l'etat present de l'Empire Ottoman", p. 335—336.

բերը՝ XVII դարի կեսերին մի շարք սրտաճմլիկ դեպքերի ենք պատահում հայկական կյանքում։

Թուրքերն ըստ սովորության դանդաղն պատրվակներով այս կամ այն անհատին ստիպում էին իսլամանալ. և եթե զոհը մերժում էր՝ չարչարում էին հազար ու մի ձևերով և սպանում։ Օրինակ՝ 1631 թվին Բաղեշում այրեցին հիղնացի կոշկակար Սարուխանին, որի հանցանքը եղել էր այն, որ ամուսնացել էր մի կնոջ հետ, չիմանալով վերջինիս մահմեդական քուրդ լինելը, և չէր կամեցել իր հանցանքը քավել մահմեդական դառնալով։ 1642 թվին Դիարբեքիրում չարաչար մահով սպանեցին տասնեհինգամյա պատանի Նիկողայոսին, կացինով ջարդելով նրա բազուկներն ու ոտների ոլոքները, այն ամբաստանությամբ, որ նա իբր թե Մուհամմեդին էր հայհոյել և չէր համաձայնվում ընդունել մահմեդական կրոնը։ 1652 թվին նույն քաղաքում, նույն մեղադրանքով և միևնույն ձևով սպանեցին նաև փականագործ քսանամյա Խաչատուրին։ 1655 թվին թուրքանալ առաջարկեցին և հետո չարաչար տանջանքներով սպանեցին Վանի Ալյուր գյուղացի բանվոր Սիրունին, այն պատճառով, որ նա փողոցում իրեն քարկոծող մահմեդական երեխաներին քարով էր պատասխանել և դրա հետևանքով նրանցից մեկը գլխից ծանր վիրավորվելով մեռել էր։ Նույն թվին նույնպես կրոնափոխություն առաջարկեցին և ապա սոսկալի մահով սպանեցին վանեցի Մխիթարին, որ համարձակվել էր իր հորը խոշտանգող մահմեդական երեխաների հավատին հայհոյել։ Հաջորդ տարին անտանելի տանջանքների ենթարկեցին և հետո գլխատեցին ոստանցի Ավետիսին, իր քուրդ ծառայակիցների այն զրպարտության հիման վրա, որ իբր թե նա ցանկություն էր հայտնել մահմեդական դառնալու, բայց ինքը չէր ընդունում։ 1662 թվին Կ. Պոլսում կախեցին զալաթիացի Գաբրիելին, որին մի ժամանակ բռնի թլփատելով ենիչերիների գնդերի մեջ էին մտցրել, բայց ինքը փախչելով ուրացել էր իր նոր հավատը։ 1672 թվին Կարինում գլխատեցին թոխաթեցի կոշկակար Բաղդասարին, որովհետև նա 13 տարեկան հասակում տանջանքների տակ մահմեդական էր դարձել, բայց հետագայում հրաժարվել էր։ Հաջորդ տարին դարձյալ Կարինում քարկոծելով սպանեցին Հուլեկի որդի Հակոբին, որը, մի մոլլայի վկայությամբ, իբր թե խոստացել էր մահմեդական դառնալ, բայց ինքը չէր ընդունում։ 1676 թվին Մուշում գլխատեցին տարեկացի պատանի Գրիգորին, այն պատճառով, որ չէր համաձայնվել մահմեդական դառնալու։ 1677 թվին Սեբաստիայում քսանմեկամյա երիտասարդ վարսավիր Բավթին բազմատեսակ չարչարանքների ենթարկեցին, քարկոծումով սպանեցին և դիակը հոշոտեցին այն բանի համար, որ նա իբր թե ասել էր, թե ինքը մահմեդական է, բայց ինքը չէր ընդունում։ Նույն թվին դարձյալ Սեբաստիայում կախաղանի վրա քարկոծելով սպանեցին Գասպար Կովան անունով մի ծերունու, որը երիտասարդ ժամանակ հարկադրանքի տակ մահմեդական էր դարձել, բայց հետո զղջացել էր։ Այսպես և ուրիշներ։[1] Եվ եթե այսքան շատ էր դիմադրությամբ նահատակություն հանձն առնողների թիվը, ապա կարելի է գուշակել, թե ինչքան մեծ պիտի լիներ թիվը այն անձերի, որոնք չկարողանալով տոկալ խոշտանգումների, ընդունում էին «ճշմարիտ հավատը»։

[1] Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, «Հայոց նոր վկաները (1155–1843). գիտական հրատարակություն» (Վաղարշապատ, 1903), էջ 433–441, 449–487, 490–501, 503 և 504–519։

Թուրքերն ունեին նաև մասսայական մահմեդականացման մի միջոց, որը կոչվում էր դեվշիրմե (հավաքում), հայկական աղբյուրներում՝ մանկաժողով, ըստ որի քրիստոնյա հպատակներից պարբերաբար երեխաներ էին հավաքում և իսլամացնում՝ ենիչերիների շարքերը լրացնելու համար։ Ենիչերիական կազմակերպության հղացող Կարա-Խալիլ Ջենդերելին (XIV դար) ասում էր, թե «պարտվածները ստրուկներն են հաղթականների, որոնց հասնում են նրանց դույքերը, կանայք, երեխաները՝ որպես օրինական ստացված։ Երեխաներին բռնի իսլամացնելով և նրանց որպես ռազմիկ զինվորագրելով հավատի ծառայությանը՝ կաշխատենք այս աշխարհում նրանց երջանկության համար, միաժամանակ և նրանց հավիտենական փրկության համար»։[1]

Մտնելով ենիչերիական շարքերի մեջ, նրանք անդամ էին դառնում բեգթաշիների ուխտին, որով միաժամանակ զինվորական ու կրոնավոր էին, ինչպես էին Եվրոպայում, օրինակ, տաճարական ասպետները։ Այս հավաքվածներից էին կազմված նաև ոչ-օղլանիները ու աջեմի-օղլանները, որոնցից առաջինները սահմանված էին կայսրության բարձրագույն պաշտոնատարներ դառնալու (պալատական պաշտոնյաներ ու կուսակալներ, ենիչերի-աղասի, սիփահի-աղասի և այլն), իսկ երկրորդները՝ պալատական երկրորդական պաշտոնատարներ։[2] Մեր տարեգրությունները շատ անգամներ են հիշատակում Հայաստանում տեղի ունեցած մանկաժողովներ, սկսած 1519 թվից, և կարելի է պատկերացնել, թե ինչ խղճալի տեսարաններ էին պարզվում, երբ մայրերի գրկից երեխաներ էին խլում, դեռ չխոսելով այն թալանի մասին, որն ընկերանում էր այդ բարբարոսական տեսարաններին։ Վերջին մանկաժողովը տեղի ունեցավ 1622 թվին «յամենայն աշխարհն Հոռոմոց և Հայոց» և «ոչ թէ զտղայք միայն առնուին, այլ շատ դրամ խնդրէին ընդ տղայոցն», բայց բարեբախտաբար Էրզրումի Աբազա փաշան, որ ապստամբ էր, չթույլատրեց իր կուսակալությունում. իսկ Դիարբեքիրի կուսակալությունում և մոտակա շրջաններում արգելք հանդիսացավ Հալեր էֆենդին։[3]

Բռնի կրոնափոխության այս երևույթները մեր ժողովուրդն անվանում էր «տաճկացում», որ նշանակում էր մահմեդականացում և թուրքացում, և որը թուրքական տիրապետության տակ երևան եկած բռնակալական երևույթների մեջ ամենազազրելին էր։

Սրան ավելացնենք նաև այլատարազության օրենքը։

Ոչ-մահմեդականները պարտավոր էին մահմեդականներից զանազանվել իրենց տարազով, որովհետև, ինչպես ասում է Ռայկոտը,

«Թուրքերի մոտ գլխանոցից են ճանաչում, թե մարդիկ որ կրոնին կամ ինչ դիրքի են պատկանում. ինչ որ ծառայում է իմանալու, թե ումը կարելի է անպատիժ կերպով թշնամանել»։[4]

Լրացնելու համար պիտի ասել, որ օրենքը միայն գլխանոցին չէր վերաբերում, այլ ամբողջ տարազին, մինչև կոշիկները։

---

[1] J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman", t. I. p. 45.

[2] Ricaut, „Histoire de l'état present de l'Empire Ottoman", p. 83—86 et 129—130.

[3] Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 210—211։

[4] Ricaut, "Histoire de l'etat present de l'Empire Ottoman", p. 264.

Այս մասին նմանապես բաղմաթիվ դեպքեր են հիշատակում մեր տարեգրությունները XVI դարի վերջերից սկսած։ Օրինակ՝ 1662 թվին Կ. Պոլսում թագավորը փողոցում տեղնուտեղը գլխատել տվեց մի հայի, որը համարձակվել էր իր ոտներին դեղին մեստ (մույկ) հագնել, և այս առթիվ արգելքի ընդհանուր հրամանները վերանորոգվեցին, ինչպես պատմում է Երեմիա Չելեբին.

«Իսկ յայդուցն մունետիկ աղաղակեալ յամենայն քաղաքս՝ եասաղ արարին զփակեղս քրիստոնէից զխայտ և զկապուտն՝ զի բնաւ մի երևեսցի։ Եւ ի մեծամեծաց մինչև ցփոքունս եղին զտակ ի գլուխ և զալփաղ, և ոչանդերձս ի վատ և ի տգեղս Ամենեիմբ»։[1]

Միևնույն հրամանը ուղարկվեց նաև կուսակալություններին։[2]

Այս բոլորը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության մեջ «անհավատի» ֆիզիկական գոյությունն իսկ ինքնին անբաղձալի երևույթ էր նկատվում տիրող տարրի կողմից՝, և Թուրքերը պարզապես «հանդուրժում» էին։ Իսկ թե ինչ հարկադրիչ պատճառ կար հանդուրժողության, այդ մեզ բացատրում է, շատ գեղեցիկ ու ճիշտ կերպով, Միքել Ֆեբուրը.

«Իրենց երկրում քրիստոնյաներին ու հրեաներին հանդուրժում են այն պատճառով, որ նրանցից ավելի են օգուտ քաղում, քան իրենց կրոնակիցներից. և նրանց թողնում են ապրել [թրշտ] այնպես, ինչպես այդ արվում է ոչխարներին ու մեղուներին՝ նրանց կաթի և մեղրի համար»։[4]

Իսկապես որ ռայան կաթի և մեղրի մի անսպառ աղբյուր էր օսմանյան պետության և տիրող տարրի համար։ Նա պիտի տար ու շարունակ տար, թե պաշտոնապես և թե անպաշտոն կերպով։

Պաշտոնապես նրա ուսերին ծանրանում էին պետության կեղեքիչ հարկերը։ Սուլթան Սուլեյման II-ի օրենսդրությամբ (1566 թ.) ոչ-մահմեդականները ենթակա էին հետևյալ երեք տեսակ հարկերին.

1. Խարաջ xaraci-ruus կամ գլխահարկ cizye, որ տալիս էին 14 տարեկանից սկսած բոլոր տղամարդիկ։

2. Հողային հարկ xaraci-muvazzaf։

3. Եկամտային հարկ xaraci-mukaseme որ կոչվում էր տասանորդ uşr կամ ösr, բայց միշտ բովանդակում էր եկամտի կամ բերքի մեկ տասներորդից ավելին, այսինքն՝ մեկ ութերորդ, յոթերորդ, չորրորդ մասը, նույնիսկ մինչև կեսը։

Իսկ XVII դարում ավելացել էին նաև հետևյալները.

4. Շաշաաթ şaşaat (շքեղության տուրք), որը տրվում էր փաթթոց կրելու իրավունքի համար, թեև այդ փաթթոցը ամեն պարագայի պետք է գույնով տարբերվեր մահմեդականների կրածից։

---

[1] Երեմիա Չելեբի, «Օրագրություն», էջ 399—400։

[2] Հակոբ Կարնեցի, «Տեղագիր Վերին Հայոց», էջ 35։

[3] Ահա թե ինչպես է նկարագրում Ղուկաս Կեղեցին նրանց անտանելի վերաբերմունքը.

«Ժանիք ունին չար գազանի,
Նման կարճի և բարբ օձի,
Արեան արբու քրիստոնէի,
Եւ մանաւանդ ուղղափառի»։

Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 127։

[4] Michel Febvre, "L'Etat present de la Turquie", p. 217.

5. Շիրա sira (խազմուզի տուրք), որը տրվում էր գինի խմելու կամ տանը գինի ունենալու իրավունքի համար, և անխտիր գանձվում էր խմողից և չխմողից.

Բացի սրանցից՝ «անհավատները» պարտավոր էին նաև մահմեդականների հետ միասին վճարել մի շարք ուրիշ տուրքեր.

6. Սուրսաթ sursat, որը տան (շենքի) հարկ էր։

7. Ավարիզ avariz (արկածային կամ դիպվածական տուրք), որը թեև վճարելի էր միայն պետության արտակարգ կարիքի դեպքերում, ինչպես պատերազմների ժամանակ, բայց սովորություն էր դարձել ամեն տարի գանձել։ Սա նույնպես ըստ տների էր գանձվում։

8. Ջեբ-անչեսի ceyb akçesi (գրպանի փող), որը հպատակների կողմից պարտադիր նվեր էր սուլթանին, երբ նա պատերազմի էր շարժվում։

Իսկ հետևյալները կուսակալական տուրքեր էին.

9. Թիբն tibn, tebn (հարդի տուրք), որը վճարվում էր կուսակալ փաշայի ձիերի պահպանման համար։

10. Օրդու ordu (բանակի տուրք), որը տրվում էր ամեն անգամին, երբ փաշան կռվի էր մեկնում։[1]

Եվ այլ մի շարք անվանավոր և անանուն հարկեր կամ տուրքեր, ընդհանուր կամ տեղական բնույթի, օրինավոր կամ կամայական։

Միաժամանակ կարելի է պատկերացնել, թե ինչպիսի կամայականություններ ու զեղծումներ էին գործվում ընդհանրապես բոլոր տեսակի հարկերի գանձման մեջ։

Բացի պետական հարկերից՝ ռայան ենթակա էր նաև մի շարք անպաշտոն կեղեքումների և թալանումների։ Երկրում արդեն վատ վարչակարգի հետևանքով ապահովություն չկար ինքնին։ Պետական և զինվորական պաշտոնությունը թալանով էր զբաղվում. և այստեղ ևս բռնություններին զոհ գնացողը առավելապես ռայան էր։ Օրինակ՝ Էրզրումի կուսակալ Զուլֆիքար փաշան, որը 1610/11 թվին վաթսունից ոչ պակաս հեծյալ խմբով ասպատակում էր երկրի ամեն կողմերում, կողոպտում ու հարբսահարում էր հայ գյուղացիներին. «և լցաւ երկիրն վայիւք և աղաղակօք ի բռնութենէ անօրէն նեղչացնց», ասում է Գրիգոր Կամախեցին։[2]

Ռայայի պարտականությունն էր ուրեմն աշխատել, վաստակել և արդյունքը տալ պաշտոնական ու անպաշտոն հափշտակիչներին։

Հարկապահանջությունները ու հափշտակումները, միացած կրոնական հալածանքների հետ, անտանելի էին դարձնում կյանքը սուլթանական իրավակարգի տակ։

Հակոբ Կարնեցին այսպես է նկարագրում թուրքական բարբարոս ռեժիմը.

«Զի ցեղ ու ցեղ և ազգի ազգի սուտ պատճառաւ հարկապահանջութիւնն և կեղեքելն անասելի է և անպատմելի, անողորմ առնուլն ի քրիստոնէից. զի ինձ այսպէս թուի, թէ Դանիէլ վասն սոցա մարգարէացաւ վասն չորրորդ գազանին, թէ ահեղ էր և զարմանալի, ուտէր և զմնացեալսն առ ոտն կոխէր»։[3]

[1] Michel Febvre, „L'Etat present de la Turquie", p. 235--236 et 375—376. J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman", t. II, p. 142—143.

[2] Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 158։

[3] Հակոբ Կարնեցի, «Տեղագիր Վերին Հայոց», էջ 30։

Նրան ձայնակցում են ժամանակակից հիշատակարանները։ Մի անծանոթ հեղինակ 1646 թվին գրում է թուրքական փաշաների կեղեքումների մասին.

«Ամենայն ապրանք թուրքացն բռնութեամբ է և անիրաւութեամբ. ուստի փաշայքն պարարտանան կար զօրութեամբ քրիստոնէից և հրէից, իսկ թագաւորն զիրանայ ընչիւք փաշայից։ Զոր օրինակ առուքն լնուն և առատացուցանեն զգեստս, իսկ գնարքն հուսկ յետոյ իջանեն ի ծոմն, և կորուսանեն զգոլն ևս իւրեանց, և զհամբաւ ջրոյն ևս»։[1]

Այսպիսին էր և զորքը։ Օրինակ՝ այսպես էին գանգատվում 1623 թվին Կարինի շրջանի հայ գյուղացիները ենիչերիների կեղեքումներից.

«Մեք գերի եմք ի ձեռս նոցա ամենայն ընդանովք մերովք վասն անվճար սուտ պարտուց նոցին. անճարակութենէ մեկ քանի զուրուշ ի փոխ եմք առել և ի հարկապահանջութիւնն եմք տուել, մէկին տասն շահ վճարել եմք՝ չկարողացաք ազատիլ, այնչափն շատցուցին, զարտ և զանդասան և զամենայն արջառ և զտունքն իւրեանցն եմք տուել և իւրեանց մարապութիւն կառնեմք, և գինայ մի գնալու ճարակ չունիմք»։[2]

Սիմեոն Լեհացին իր ուղեգրությունում այսպես է նկարագրում հայ ժողովրդի տառապանքը.

«Եւ յայնմ ամի (1613 թ.), յորում ես էի Թոխատ, ել հրաման չար, թէ եկեղեցիս և վանորայս մի վառեսցեն մոմեղէն ճրագ, այլ եղէ. և թէ ուրեք գտանէին՝ տուգանէին։ Եւ այսպիսի տառապանք և նեղութիւն էին ի ձեռս տաճկաց, վասն որոյ յոյժ աղքատ և չքաւոր են, զի միշտ զրկեն, զգվեն, տուգնեն, զրպարտեն և առաւել հարկս պահանջեն. և թէ տասն որդի ունիցի ոք, ամէնէն խարաճ առնուն. և թէ հեռանայ, զարձեալ առնուն։ Եւ Ստամբոլայ գաւառօք ձի, ջորի հեծնուն. և անդի Սեբաստ մինչ յԱմիթ էշ և ուղտ. իսկ Սեբաստուին տան էշ ալ տէկմա չէրեի, ամէնն եղկու բանեցնեն, աղ և բեռն բառնան, այլ և հեծնան»։[3]

Որա հետ միասին Սիմեոն Լեհացին խոսում է Հայաստանում ենիչերիների կատարած համատարած բռնությունների մասին.

«Եւ այնպես չար էին եանչարիքն, որ քրիստոնէից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ չուխայ ագանիլ, ոչ այգի, ոչ տուն մեծ. այլ զամենայն յափշտակէին ի ձեռայ։ Նաև առաջնորդայ չտային քննել հաս-չհաս կամ օրէնք պահել. զի թէ ոք կամէր կին առնուլ և չհասութք լինէր, չէրթային առ հովիւ կամ առաջնորդ, [այլ երթային առ] ենչարի մի և տային կաշառ, և նա գայր իրիցուն թօփուզով պսակ տայր առնել. և նա ակամա պիտէր խօսիցն չելնէր. ապա թէ ոչ բազում չարիս անցուցանէր ի գլուխն և փնաս և տուգանք ձգէր զնոսա. այլև եկեղեցեաց և վանօրէից։ Եւ թուրքաց աշխարհն ամենայն այդպէս ենն»։[4]

Շատ երկար է շարանը նման վկայությունների։ Ճնշումների և հարստահարությունների բազմաթիվ տեսակներից մի քանիսը թվելով Երեմիա Չելեբին ասում է, որ թուրքերը զանազան սուտ մեղադրանքներով տան-

[1] Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 1496, էջ 309բ։
[2] Գրիգոր Կամախեցի, «Ժամանակագրութիւն», էջ 216։
[3] Սիմեոն Լեհացի, «Ուղեգրութիւն», Հանդէս Ամսօրեայ, 1934, էջ 139։
[4] Անդ 188։

ջում էին հայերին։ Օրինակ՝ ասում էին, թե այսինչ հայը կամ հայերը Թուրքին թաղել են քրիստոնեական ծեսով, և կամ խոզի միս են կերցրել։ Իրենց ուղևորությունների ընթացքում նրանք պատուհաս էին դառնում հայ գյուղացիներին, նրանց հաշվին ապրելով իրենց ամբողջ կարավաններով. ոչ միայն իրենք էին ուտում ու լիանում, այլև նրանց անասունները։ Տան մեջ Թուրքերը լկում էին աղջիկներին ու տղաներին։ Ոչխար էին պահանջում ու իրենց համար մորթում, և սանտիրոջից մորթելու վարձն էլ էին ստանում և այլն։[1]

Տնտեսական ու բարոյական ճնշումների այս անտանելի միջավայրի մեջ էր ապրում արևմտահայ ժողովուրդը։ Նա տվայտում էր և արյունաքամ էր լինում Թուրքական բռնակալության ճիրանների մեջ[2]. և շատ բնական է, որ այսպիսի պայմաններում ճնշվող, տառապող ու շահագործվող ժողովրդական մասսաների մեջ զարթներ ազատության պահանջը և առաջ գային ազատագրական ձգտումներ։

Իրոք՝ մենք տեսնում ենք, որ XVII դարում այդ պահանջն ու ձգտումները կոնկրետ երևույթներ են դառնում։ Դրա արտահայտություններից մեկը, օրինակ, գտնում ենք Սարգիս Հիզանցու հիշատակարանում։ Նա իր ընդօրինակած ձեռագրի վերջում, արձանագրելով ժամանակի վիշտն ու նեղությունները, գրում էր 1610 թվին.

«Ի դառն և ի նեղ և ի վշտաշատ ժամանակի, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անաւրինաց. քանզի ևս քան զևս սաստկանայ բրոնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս, ևս առաւել ազգիս հայոց։ Զոր յուսամք և խնդրիմք և հայցեմք յամենառատ քաղցր[ա]կամք մարդասիրէն Աստուծոյ, որ վերստին նորոգեսցէ, կանգնեսցէ և հաստատեսցէ զաթոռ և զգաւազան իշխանութեան գնայրապետին մերոյ և զթագաւորին՝ յառաջին սէր և ի միաբանութիւն, և աներկիւղ, անվնաս պահեսցէ զազգս հայոց յամենայն հէնից և հնարից սատանայի, ի պէսպէս չարե[ա]ց և փորձանաց, ներքոյ և արտաքոյ. ամէն։»[3]

Նույն արտահայտությունը տեսնում ենք նաև Թոխաթեցի Հակոբ Բաթուկենցի մոտ, որը 1608 թվի մի հիշատակարանում, ողբալով հայ ժողովրդի թշվառ վիճակը, գրում էր.

---

[1] Տեսնել Լեոյի մոտ, «Հայոց պատմություն», հտ. Գ (Երևան, Գիտ. Ակադեմիայի Հրատարակչություն, 1946), էջ 128։

[2] Մենք դեռ չխոսեցինք Հայաստանում հաստատված քրդական մի շարք կիսանկախ իշխանությունների մասին, որոնք մի առանձին պատուհաս էին հայ խաղաղ աղգաբնակության գլխին։ Այդպիսի իշխանություններ էին Բաղեշի, Խոշաբի, Զուլամերկի, Խիզանի, Սպարկերտի, Մոկսի, Շիրվանի, Հղուի և այլ էմիրությունները, որոնք օսմանյան ֆեոդալական սիստեմի մաս էին կազմում և լիովին լրացնում էին պետական հարկահանության, փաշաների, ենիչերիների, սիփահիների պակաս թողածը։ Օրինակի համար՝ Բաղեշի Բաղիշեցին 1650-ական թվականներին, խոսելով Բաղեշի ամիրա Ավդալ խանի մասին, գրում է «Եւ այս ԽԳ (43) ամ է՝ որ ամիրայ է Բաղշու քաղաքին. և զանրաւ չարիս զոր անցուցանէ ո՞ կարէ ծրել ի քարտիզի. գնարկապահանջութիւն, գկեղեցել, գթալանել, գոուղանսն, որ հասուցեալ է զմեզ ի յետին չրավորութիւն...։ Զի քան բէկդատայ [ունի] մեծամեծք. թող գաղջկունս և զմանր տղայք», տես՝ Դիւան հայոց պատմության, գիրք Ժ (Թիֆլիս, 1912), էջ 53։

[3] Ե. Լալայան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա (Թիֆլիս, Տպ. «Էսպերանտոյ», 1915), էջ 839 - 840։

«Ողորմելի և աւաղելի եղեր, մեծանուն ազգ Հայոց Մեծաց. վասն է՞ր փոքրկացար, տառապեցար և նուաղեցար.— վասն այն՝ զի մեղար։ Այլի հայկազուն առնմիզ, ոչ տուեր խաղող, այլ փուշս բուսուցեր, վասն այն խոպանացար. ցանկ քո քակեալ եղև, և եղեր կոխան ամենայն աղգաց։ Այժմ զի՞նչ առնելոց ես, զի որբ մնացիր ի հօրէ և ի մօրէ, այսինքն ի թագաւորէ և ի հայրապետէ. Այլ յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, զի փրկիչ քո նա է. թէպէտ և եհար վասն մեղաց՝ դարձեալ նոյնինքն ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում, և ժողովեսցէ որպէս հաւ զձագս իւր ընդ թեւօք և սեպհականեսցէ ի հայրենի աշխարհն, և հաստատեսցէ թագաւորաւ և հայրապետիւ»։[1]

Այս շրջանում հայ ժողովրդի քաղաքական դիտակցությունն հասել էր այնտեղ, որ Հայաստանի գրության թշվառությունն արդեն սկսել էր իսկապես դիտվել որպես սեփական պետականության բացակայության հետևանք, ինչ որ նշանակում էր, թե այդ ժողովուրդն այլևս անցկացրել էր իրեն շրջապատող, իրեն ճնշող երևույթներին պասսիվ հանդիսատես լինելու շրջանը։ Աղարիա Մասնեցին Ջալալիների ավերածությունների առթիվ նշում էր այն միտքը, թէ դրանք օտարի տիրապետության, մեր ժողովրդի անտերության արդյունքն են, մի միտք, որի մեջ ամփոփված էր հայոց թագավորության վերականգնման դաղափարը.

«Այս ամենայն մեղքն է արել,
Որ անօրէնքն են մեզ տիրել.
Մեր թառաւորքն են խափանել,
Զմեզ ի յաշխարհս անտէր թողել»։[2]

Այս տրամադրությունը դարի 30-ական թվականներին կենսավորվում է արևմտահայ բուրժուազիայի ներդասակարգային խլրտումների և հողևորականության ներքին կռիվների մեջ. իսկ 60-ական թվականներին դառնում է շարժում՝ առևտրական բուրժուազիայի գլխավորությամբ, ընդգրկելով ժողովրդական մասսաները։

Այս շրջանն արդեն բնորոշ է Օսմանյան Կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մոտ ազատագրական շարժումների ընդհանուր դարթնումով։ Դեռևս 1595—1601 թվականներին ապստամբության մեջ էին վալախները։ Միքայել Քաջ վոյվոդը անկախություն էր հռչակել Վալախիայում՝ իր իշխանության տակ միացնելով նաև Մոլդավիան և Տրանսիլվանիան։[3] 1602 թվից ապստամբական միացյալ շարժում կար ալբանացիների և սերբերի մեջ։[4] 1606 թվին Կիպրոսում 80,000 հույներ ապստամբություն էին բարձրացրել։[5] Նույն միջոցներին բուլգարների պատրիարք Աթանասը շրջել էր բալկանյան բոլոր երկրները՝ նրանց ազատագրության գործն ուսումնասիրելու, որից հետո թուրքերին Եվրոպայից ար-

[1] «Կամենից» (Վենետիկ, 1896), էջ 169։

[2] Ա գ ա ր ի ա Մ ա ս ն ե ց ի, «Ողբ», Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 336։

[3] Th. L a v a l l e e, „Histoire de l'Empire Ottoman" (Paris, Garnier Freres, 1855), p. 275—278.

[4] П. К у л и ш ъ, „Восточный вопрос и задунайская славянщина перед глазами московского царя Михаила Феодоровича, 1626", *Журнал Министерства Народного Просвещения*, ч. cxcv, 1878, отд. II, стр. 238.

[5] Գ ր ի գ ո ր Կ ա մ ա խ ե ց ի, «Ժամանակագրութիւն», էջ 98—100։

տաքսելու իր ծրագրով դիմել էր Վենետիկին, Սիցիլիայի սպանական փոխարքային և ուղեվորվել էր նաև մինչև Կիև։[1] Կանդիայի 25-ամյա պատերազմն (1645—1669 թ. թ.) ավելի ևս հրահրել էր ազատագրական շարժումները։ Պատերազմի հենց սկզբից շարժվել էին Վալախիան և Մոլդավիան։[2] Ծանոթ են Պետրոս Վրչևիչի ձեռնարկումները՝ սկզբում հանուն բուլգար ժողովրդի, և հետո՝ Մոլդավիայի, Վալախիայի, Բուլգարիայի և Սերբիայի ամբողջ ժողովուրդների։[3] Հայտնի են նաև 1650-ական թվականներին Կ. Պոլսի հունաց պատրիարքներ Պարթենիոս II-ի և Պարթենիոս III-ի դաղտնի հարաբերությունները ռուսական ցարի հետ՝ նույնպիսի նպատակներով։[4] Այս ժամանակներս Զմյուռնիայում հայտնվել էր նաև հրեաների մեսիան, որը կոչվում էր Սաբեթայ-Սևի,[5] ինչպես և Սալոնիկում հրեական մի այլ մեսիա, որին տրվել էր Մալեքիմ Սոլոն (Սողոմոն թագավոր) անունը։[6] Սրանք ևս եկել էին իրենց ժողովուրդը փրկելու Թուրքական տիրապետությունից։

Այսպես և արևմտահայերի մոտ Կանդիայի պատերազմի շրջանում առաջ էր եկել ազատագրական շարժում, որը օրգանապես կապված էր շրջապատի շարժումների հետ։ Սկզբում այդ կապված էր հույն ժողովրդի ազատագրական շարժման հետ, հույն-հայկական միացյալ ծրագրով. իսկ Կանդիայի պատերազմից հետո այդ արևմտահայ շարժումն իր կապերն ավելի էր ընդարձակել՝ միանալով նաև վրացական ժողովուրդների (իմերեթացիների, գուրիացիների, մինգրելների) և ասորիների հետ, և իր գոյությունը պահել էր մինչև 80-ական թվականները։

Մենք, առանց մտնելու այստեղ հիշյալ շարժման պատմության մեջ, աշխատեցինք ուրվագծել Թուրքական տիրապետության ընույթը Հայաստանում՝ մինչև XVII դարի այդ շարժումները, նպատակ ունենալով սկզբնաղբյուրների օգնությամբ լույս սփռել տվյալ դարաշրջանում արևմտահայ ժողովրդի դրության վրա, և նրանով մասամբ նաև, ի հարկե, Օսմանյան կայսրության հպատակ մյուս ժողովուրդների, որոնք ազատագրական ընդհանուր դարթոնքի ակտիվ դերակատարներն են եղել։

---

[1] В. Макушев, „Болгария под турецким владычеством, преимущественно в XV и XVI веках", *Журнал Министерства Народного Просвещения*, ч. CLXIII, 1872, отд. II, стр. 327—329. Idem, „Восточный вопрос в XVI и XVII веках, по неизданным итальянским памятникам", *Славянский Сборник*, т. III (С.-Петербург, Изд. Слав. Ком-та, 1876), отд. I, стр. 15—25.

[2] G. Bousquet, „Histoire du peuple bulgare, depuis les origines jusqu'a nos jours" (Paris, 1909), p. 125. T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie" (Paris, Libr. Felix Alcan, 1914), p. 209—210.

[3] G. Bousquet, „Histoire du peuple bulgare", p. 125. В. Макушев, „Восточный вопрос в XVI и XVII веках, по неизданным итальянским памятникам", *Славянский Сборник*, т. III, стр. 25—26.

[4] J. de Hammer, „Histoire de l'empire Ottoman", t II, p. 573. Ibidem, t. III, p. 44. Երեմիա Չելեբի, «Օրագրություն», էջ 233—235։

[5] Ակոաքել Դավրիժեցի, «Պատմություն», էջ 651—663։ Սաբեթայի մասին իր ժամանակին հայերեն լեզվով լույս է տեսել և մի առանձին անթվական գրքույկ, հավանաբար Երեմիա Չելեբիի հեղինակություն և հրատարակություն, XVII դար, այսպիսի խորագրով. «Տետրակս այս որ կոչի Սապէթայի Սեու համբաւեալ ի հրէից։ Ոմն խարերայ Սապէթայ անուն կամէր կրկին մոլորել գմոլորեալսն»։

[6] Զաքարիա Սարկավագ, «Պատմագրություն», հտ. Բ (Վաղարշապատ, 1870), էջ 113—116։

А. Анасян

Турецкое владычество в Армении в XVII веке

Резюме

Автор освещает политическое и экономическое положение армянского народа, находившегося под турецким владычеством, и характеризует в общих чертах сущность этого владычества в Армении накануне освободительных движений XVII века; одновременно он дает подробные сведения об административно-территориальном делении западных провинций Армении, находившихся под османским господством. Повстанческое движение „джелали", которое, вследствие слабости центральной власти, получило широкое распространение в азиатских провинциях с последнего десятилетия XVI-го века до начала второго десятилетия следующего века, сыграло немаловажную роль в судьбе западных армян в указанный период.

Автор дает сведения о разрушениях, произведенных в уездах Большой и Малой Армении, и тяжелых последствиях этих разрушений: голод, поход Шах-Аббаса I-го, увод армян в Персию, добровольная эмиграция армянского народа из пределов своей родины по двум основным направлениям: на восток в районы Еревана, Елизаветополя, Тавриза и Артабиля, и на запад в Константинополь и его окрестности, вплоть до самой Молдавии, Польши, островов Кипр и Родос, до Каффы, Гозлова, Венеции и т. д.

Далее, автор приводит материалы, разоблачающие характер турецкого насилия и гнета.

Помимо грабительских государственных налогов, насчитывающихся в эту эпоху до 10, помимо официального расхищения и разорения национального имущества армян, экономическое притеснение сплошь и рядом проявлялось в насилиях и грабежах, осуществляемых со стороны пашей, янычаров, больших и малых представителей власти. В связи с этим приводится высказывание одного автора XVII-го века о том, что турки „в своей стране терпят христиан и евреев лишь потому, что от них они имеют больше пользы, чем от своих единоверцев, и предоставляют им жить, как поступают обычно в отношении овец и пчел—ради их молока и меда".

Притеснение армян проявлялось в беспримерных национальных и религиозных гонениях и насилиях.

Основной задачей турок являлось массовое и индивидуальное „отуречивание" угнетенных народов и обращение их в магометанство. Автор, на основе армянских текстов о житии мучеников XVII-го века, приводит данные о неоднократных случаях насильственного обращения в магометанство. Одновременно автор упоминает о так называемом „девширме" (набор), являвшемся средством официального захвата людей. Путем этих наборов у армян и других христиан турки периодически отбирали детей и обращали их в ислам, в целях пополнения рядов янычар и подготовки должностных лиц для обслуживания империи и султанского дворца.

Одним из проявлений религиозно-морального притеснения являлся закон об обязательной форме одежды, согласно которому немагометане обязаны были отличаться по своему наружному виду, что указывало бы на то,—„кого можно оскорблять безнаказанно". Нарушение упомянутого закона угрожало смертью.

Понятно, народ подвергавшийся столь сильным притеснениям, находившийся в невыносимых условиях турецкого гнета, должен был испытывать стремление к освобождению. И действительно, в исторических записях первых десятилетий XVII века мы встречаем высказывания о необходимости восстановления государственности Армении. В это же самое время начинает усиливаться борьба за политическую независимость армянского народа.

Автор не углубляется в историю этого движения. Он лишь ставит себе задачей—осветить в общих контурах характер турецкого владычества в Армении до освободительных движений западных армян в XVII веке.